ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

------- 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

«ՆԿՈՒՂ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2022 թվականի մարտի 2-ի №07/11.1/1429-2022 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) տրամադրված տեղեկատվության («Երևան քաղաքի Աբովյան փողոցի №22 հասցեում՝ «ՆԿՈՒՂ» բարի տարածքում, որի պատասխանատու անձն է Սահակը, տեղակայված է 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում առանց թույլտվության շահագործվող բջջային կապի վերահաղորդակ») հիման վրա Հանձնաժողովը 2022 թվականի մարտի 23-ի №123-Ա որոշմամբ «ՆԿՈՒՂ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավորեցրել է դադարեցնել առանց թույլտվության 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը,

բ) Նախարարությունը 2022 թվականի մայիսի 2-ի №07/11.1/3310-2022 և մայիսի 30-ի №01/11.1/4180-2022 գրություններով հայտնել է, որ հետազոտումների արդյունքում 896.1ՄՀց ռադիոհաճախականությամբ արձանագրվել են կողմնակի ճառագայթումներ, որոնց աղբյուրը (բջջային կապի վերահաղորդակ) հայտնաբերվել է Երևան քաղաքի Աբովյան փողոցի №22 հասցեում գործող «ՆԿՈՒՂ» սրճարանում, որի պատասխանատուի վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողովին է տրամադրվել Նախարարության 2022 թվականի մարտի 2-ի №07/11.1/1429-2022 գրությամբ,

գ) Հանձնաժողովը, դադարեցման վերաբերյալ որոշման ընդունումից հետո առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը շարունակելու փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի հունիսի

8-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 8-ի №ԳԲ/34.2-Մ2-9/1820-2022 գրությամբ,

դ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, 2022 թվականի հունիսի 27-ի գրությամբ հայտնել է, որ դեռևս փետրվար ամսին Նախարարության զգուշացումից հետո վերահաղորդակը չի օգտագործվել, և միայն 2022 թվականի ապրիլի 18-ին Նախարարության աշխատակիցների կողմից տեղեկացվել է, որ սարքը միացված է, ինչն, ըստ Ընկերության, չի համապատասխանում իրականությանը: Հետագայում, Նախարարության աշխատակիցների ներկայությամբ չափումներ կատարելու նպատակով մի քանի րոպեով միացվել է սարքը, որից հետո անջատվել և այլևս չի միացվել,

ե) Հանձնաժողովը 2022 թվականի հուլիսի 6-ի №ԳԲ/34.2-Մ2-9/2192-2022 գրությամբ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր կամ այլ տեղեկություններ ձեռք բերելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ փոխօգնության կարգով դիմել է Նախարարություն՝ Ընկերության ներկայացրած պարզաբանումների վերաբերյալ դիրքորոշում ստանալու, ինպես նաև Ընկերության կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործումը շարունակելու փաստը հաստատելու վերաբերյալ, որի կապակցությամբ Հանձնաժողովը 2022 թվականի հուլիսի 12-ի №296-Ա որոշմամբ կասեցրել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը,

զ) Նախարարությունը 2022 թվականի օգոստոսի 4-ի №01/11.1/5694-2022 գրությամբ հայտնել է, որ իրականացված հետազոտումների արդյունքում Երևան քաղաքի Աբովյան փողոցի №22 հասցեում գտնվող «Նկուղ» սրճարանում հայտնաբերվել է 896.1ՄՀց հաճախականությամբ շահագործվող բջջային կապի վերահաղորդակ, որի աշխատանքը՝ համագործակցելով սրճարանի պատասխանատու անձի հետ, դադարեցվել է սույն թվականի ապրիլի 18-ից, իսկ պատասխանատու անձի կողմից բանավոր տրամադրած տեղեկատվության համաձայն, տարածքը վարձակալությամբ հանձնվել է այլ անձի, որն էլ այլ սարքավորումների հետ միասին պատահաբար միացրել էր նաև վերահաղորդակը: Բացի այդ, Նախարարությունը նշված գրությամբ ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեից ստացված տեղեկատվությունը, ըստ որի՝ նշված հասցեում Ընկերության անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարված չէ,

է) Հանձնաժողովը 2022 թվականի օգոստոսի 9-ի №ԳԲ/34.2-Մ2-9/2691-2022 գրությամբ դիմել է Նախարարություն՝ խնդրելով հաստատել Ընկերության կողմից առանց

թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործումը շարունակելու փաստը կամ տրամադրել այլ անձի կողմից տվյալ ռադիոհաճախականությունների ապօրինի օգտագործումը հավաստող փաստաթղթեր (ակտ, արձանագրություն), որոնցով հնարավոր կլինի նույնականացնել տրամադրված տվյալներում նշված և իրականում ռադիոհաճախականությունների ապօրինի օգտագործող անձին, որին ի պատասխան Նախարարությունը 2022 թվականի օգոստոսի 24-ի №01/11.1/6807-2022 գրությամբ հայտնել է, որ Երևան քաղաքի Աբովյան փողոցի №22 հասցեում գործունեություն իրականացնող Ընկերության կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործումը շարունակելու փաստի կամ այլ անձի կողմից տվյալ ռադիոհաճախականությունների ապօրինի օգտագործման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն չունի,

ը) Հանձնաժողովը վերսկսել է 2022 թվականի հունիսի 8-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը, որի մասին վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 29-ի №ԳԲ/34.2-Մ2-9/2945-2022 գրությամբ,

թ) օրենսդրության շրջանակում Հանձնաժողովն առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործման դադարեցման կարգադրություն կարող է արձակել կամ դադարեցման կարգադրությունն արձակելուց հետո առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործումը նույն անձի կողմից շարունակելու դեպքում վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկել՝ կոնկրետ անձի կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործումը հավաստող բավարար հիմքերի առկայության պարագայում: Միևնույն ժամանակ, օրենսդրության պահանջներին չհամապատասխանող՝ ճառագայթող ռադիոհեռարձակման աղբյուրների հայտնաբերման, տեղորոշման տեղեկատվությունը (այդ թվում՝ անօրինական ռադիոհաճախականությունների օգտագործումը նույն անձի կողմից շարունակելու մասով) հավաստող մարմինը Նախարարությունն է, մինչդեռ, նշված վարույթի շրջանակում Նախարարության ներկայացրած տեղեկատվությունը Հանձնաժողովին հնարավորություն չի ընձեռում և չի ապահովում բավարար հիմքերի առկայությունը՝ պարզելու առանց թույլտվության ռադիոհաճախականություններ օգտագործող անձին, ինչը հնարավոր չի դարձնում վարչական ակտի ընդունումը, ուստի Հանձնաժողովը 2022 թվականի սեպտեմբերի 6-ի №352-Ա որոշմամբ կասեցրել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ մինչև սույն վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջն (իրականում անօրինական ռադիոհաճախականություններ օգտագործող նույնականացված անձին) ի հայտ բերելը,

ժ) Հանձնաժողովը 2022 թվականի սեպտեմբերի 7-ի №ԳԲ/34.2-Մ2-9/3086-2022 գրությամբ դիմել է Նախարարություն՝ վարչական վարույթի շրջանակում խնդրո առարկա ռադիոհաճախականությունների ապօրինի օգտագործման վերաբերյալ տեղեկատվության առկայության պարագայում Հանձնաժողովին տեղեկացնելու խնդրանքով, սակայն Նախարարությունը նշված հարցի մասով որևէ այլ տեղեկատվություն չի տրամադրել,

ժա) Հանձնաժողովը վերսկսել է 2022 թվականի հունիսի 8-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը, որի մասին վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 9-ի №ԳԲ/34.2-Մ2-9/3901-2022 գրությամբ,

ժբ) լրացել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժամկետը, և այդ ընթացքում չի վերացել վարչական վարույթի կասեցման հիմք հանդիսացած հանգամանքը, ուստի Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը Հանձնաժողովի կողմից ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Կարճել դադարեցման վերաբերյալ որոշման ընդունումից հետո առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը շարունակելու փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի հունիսի 8-ից հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
---------- 2022թ.